ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահ՝
Ս. Մարգսյան
"_____" _____ 2020 թ.

Աշոտ Անաստասյանի հիշատակին նվիրված արագ շախմատի
Հայաստանի 2020 թ. առաջնության

Կանոնակարգ

Հայաստանի ութակի չեմպիոն Աշոտ Անաստասյանի հիշատակին նվիրված արագ շախմատի առաջնությունը կանցկացվի հունվարի 22-23-ին Երևանում, Տ.Պետրոսյանի անվան շախմատի տան դահլիճում: Այն կանցկացվի շվեյցարական մրցակարգով՝ 9 խաղափուլով: Մրցաշարը կանցկացվի համաձայն ՖԻԴԵ-ի շախմատային կանոնների և կուղարկվի ՖԻԴԵ միջազգային վարկանիշի հաշվարկի համար:

Մասնակիցները՝ ըստ Հայաստանի շախմատային ֆեդերացիայի կողմից հաստատված կանոնադրության:

Ժամակարգը՝ յուրաքանչյուրին պարտիայի համար կտրվի 15 րոպե՝ 10 վայրկյան քայլի համար հավելումով,

Մրցանակային հիմնադրամը կկազմի 1 միլիոն 200 հազար դրամ: Մրցանակային տեղերի քանակը՝ 13 (ցուցակը կցվում է): Հավասար միավորների դեպքում մրցանակները կբաշխվեն համաձայն լրացուցիչ ցուցանիշների, որոնք են՝

- հակառակորդների հատված միջին վարկանիշը (հանած ամենացածր վարկանիշ ունեցող մրցակցի վարկանիշը),
- անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքը,
- հաղթանակների առավելագույն թիվը:
- եթե հավասարությունը պահպանվի, ապա
  ա/ 1-ին տեղի համար կանցկացվի երկու պարտիայից բաղկացած լրացուցիչ մրցամարտ 5 րոպե՝ 3 վայրկյան քայլի համար ժամակարգով: Ոչ-ոքիի դեպքում, նոր վիճակահանությունից հետո, մրցամարտը կշարունակվի նույն ժամակարգով մինչև առաջին հաղթանակը: Այդ դեպքում գույների հերթականությունը կփոխվի յուրաքանչյուր զույգ պարտիայից հետո:
  բ/ մնացած տեղերի համար մրցանակները կկիսվեն հավասարաչափ, բայց ոչ ավելի, քան հաստատված մրցանակների քանակը:

Գլխավոր մրցավար,
միջազգային մրցավար՝ Ա.Վարդապետյան